

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ

ԼԻԼԻԹ ՄԻՄՈՆՅԱՆ

«ԽՈՐԴՈՒՐԴ ՄԵԾ ԵՎ ՍՔԱՆՉԵԼԻ» Ս. ԾՆՆԴՅԱՆ ՇԱՐԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Ս. Ծնունդը կամ Փոքր Զատիկը հայ ժողովորի ամենասիրված տոներից մեկն է: Պահպանվել են այդ տոնի բազում ժողովրդական երգեր, որոնք պատկանում են տոմարային ծիսական երգերի ավետիսմերի և նոթածանրին:

Բացի ավետիսմերից, բանավոր ավանդման միջոցով մեզ են հասել նաև մի շարք երգեր, որոնց բանաստեղծական տեքստերը համընկնում են Ս. Ծննդյան եկեղեցական երգերի հետ: Միաժամանակ հարկ է նշել, որ դրանց մեղեղիմերը կամ բավականին հեռավոր նմանություն ունեն նշված եկեղեցական երգերի հետ, կամ բոլորովին տարբեր են դրանցից: Սույն ուսումնասիրությունը վերաբերում է այն հարցին, թե որքանո՞վ են «Խորհրդուրդ մեծ և սքանչելի» երգի բանաստեղծական տեքստով ժողովրդական երգերը մոտ այս շարականին և արդյո՞ք հնարավոր է որոշել, թե ո՞րն է բուն բնագիրը՝ եկեղեցակա՞ն մեղեղին, թե՛ ժողովրդականը:

«Խորհրդուրդ մեծ և սքանչելի» Ծննդյան շարականը ավանդաբար համարվում է հոգևոր ավետիս: Սակայն իր ժամանակին բնութագրերով՝ թե՛ երաժշտական, թե՛ բանաստեղծական, շարականը չի համապատասխանում ժողովրդական ավետիսի խստագույն պահպանվող նորմերին: Այդ նորմերին (երկուական կամ երեքական տողերով հանգավորվող բանաստեղծական տեքստ, ութվանկանի երկանդամ տող-միավոր, երեք հիմնական ավանդական բանաստեղծական տեքստեր, բանաձևաված երաժշտություն և այլն) համապատասխանում է մեկ այլ եկեղեցական Ծննդյան երգ¹:

Դիմենք սակայն մինչ այժմ կատարված հետազոտություններին:

Իր «Հոգևոր Երգերի ձևն ու բովանդակությունը» հոդվածում Կոմիտաս Վարդապետը տալիս է «Ավետիս» անվանման հետևյալ բացատրությունը.

«Ավետիսմեր. - սոցա հյութը առնված է Ս. Ավետարանից հրեշտակաների՝ հովհիվներին մանուկ Հիսուսի ծննդին ավետելու րոպեն: Ավետիսմերը վերագրում են Մ. Խորենացուն, բայց ոճը խիստ փոխված է՝ ժողովրդի մեջ բերմերերան անցնելով: Այժմ ևս կան անթիվ-անհամար ավետիսմեր, որոնք զանազան տեղեր այլ կերպ և այլ եղանակով են երգվում, բայց ընթիանուածես խոսքերի բովանդակությունը միևնույնն է. զանազանությունը բարբառի մեջ է. իսկ եղանակները կամ ԴԿ, որպես «Խորհրդուրդ մեծ» շարականը, կամ ԱԶ դարձվածք՝ ԳԶ-ի և ԴԿ-ի խառնուրդոց բաղկացած»²:

¹ Զայնագրեալ Երգեցողութիւնք Սրբու Պատարագի, Երկրորդ տպագրութիւն, Վաղարշապատ, 1878, էջ 112-113:

² Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., Հայպետիրատ, 1941, էջ 108:

Թեև հետո Կոմիտասը մեջքերում է ժողովրդական ավետիսի մի օրինակ, իր սահմանաման մեզ նա եղանու է եկեղեցական ավետիսի մասին պատկերացումից: Այս սահմանումն ընդունելի է միայն այն դեպքում, եթե համաձայնենք, որ այն վերաբերում է եկեղեցական ավետիսի իրու ինքնուրույն, պրոֆեսիոնալ երգաստեղծության ժանրի: Այլապես ստիպաված պիտի լինենք արիստուականորեն նույնացնել իրար հետ բանաստեղծական-ռովանդակային ու առավել ևս երաժշտական առումով կապ չունեցող երևույթներ՝ հիմնվելով այն բանի վրա, որ դրանք ունեն ընդհանուր, քրիստոնեական շրջանում ներմուծված թեմատիկ նյութ: Ժողովրդական ավետիսները մեծ մասամբ ստեղծվել են այլ ճապատակներով և այլ միջավայրում, թեև որոշ ավետիսների մեջ մուտք են գործել Խորենացու «Խորհուրդի մեծ և սքանչելի շարականի տեքստի փոքր հատվածներ³:

Մ. Մանուկյանը թեև իր ավետիսների սահմանման մեջ չի հիշատակում «Խորհուրդի մեծ»-ը, իսկ ավետիսներն եւ համարում է քրիստոնեական շրջանում նոր բովանդակություն ստացած հնագույն եեթանոսական երգեր⁴, այրութանորդի իր «Ժողովրդական ավետիսներ» ժողովածուի մեջ ընդգրկել է նաև «Խորհուրդի մեծ և սքանչելի» շարականի հայտնի գրայքալ նմուշը և երկու ժողովրդական տարրերակներ⁵:

Ուստի այն բարցը՝ արդյոք «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը կամ դու ժողովը դարձական տարրերակները կարելի⁶ է համարել ավետիսներ, թե ոչ, բաց է մնում:

«Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը⁶, ինչպես նաև Հայ Առաքելական Եկեղեցու Ծննդյան կանոնի բոլոր շարականներն ավանդաբար վերագրվում են Մովսես Խորենացուն⁷: Ժողովուրդը պահպանել է մի շարք երգեր, որոնց բանաստեղծական տեքստն իրենից ներկայացնում է այդ շարականի առաջին երեք տեսքը: Առավել հաճախ հանդիպում են նմուշներ, որոնցում երգվում են առաջին երկու տեսքը, ավելի հազվադեպ՝ մեկ կամ երեք տուն պարունակող նմուշներ:

Այս հնագամանը թույլ է տալիս Մ. Մանուկյանին այդ երգերը համարել Խորենացու երգի տարրերակներ⁸, իսկ շարականը՝ համապատասխանաբար դրանց մայր օրինակը⁹:

Մեզ հայտնի 12 ժողովրդական նմուշների մեջենիները (Մ. Մանուկյան, «Ժողովրդական ավետիսներ», հետագայում՝ Մ.Մ. ՆՆ 2, 3, Կոմիտասի անվան Երևանի պետական

³ Մեզ հանդիպել է միայն. «Հովհիքն երգեն ընդ հրեշտակս,

Տան աւտիսի աշխարհի»:

⁴ «Մենք միայն Մարտունու շրջամի նմուշը նայնագրելուց հետո համոզվեցինք, որ դրանք ավետիսների առանձին՝ մեկը մյուսից անջատ տարատեսակներ չեն, որ ժողովրդի մեջ երգվող ավետիսները ստեղծվել են [իրքն] Նոր տարվա ամսաբրիստոնեական ավետման երգեր, որպես կարևոր և ծավալուն նախորդ միացնելով Քրիստոսի Ծննդման ավետող ու պատմող մասերը». Մ. Մանուկյան, ժողովրդական ավետիսներ, Եջմիածին, 1995, էջ 19:

⁵ Նույն տեղում, էջ 41-51, ՆՆ 1-3:

⁶ Այստեղ և ստորև ասելով՝ Մովսես Խորենացու «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը, հասկանում ենք Ն. Թաշճյանի կողմից գրաված տարրերակը, որն ընդունված է գիտական շրջանառության մեջ, այսինքն. Զայնագրեալ շարական հոգեստը երգոց, Վաղարշապատ, 1875, էջ 66:

⁷ Ն. Թահմիզյան, Գոհգոր Նարեկացին և նայ երաժշտությունը V-XV դդ., Երևան, 1985, էջ 148-149:

⁸ Մ. Մանուկյան, Աշվ. աշխ., էջ 49 և 51:

⁹ Նույն տեղում, էջ 46:

կոմներվատորիայի Հայ երաժշտական ֆոլկորագիտության ամբիոնի և ԳԱԱԱ Արվեստի իմստիտուտի ժողովրդական ատեղծագործության բաժնի ամսիա ֆոնճերում պահվող 10 այլ նմուշները, ինչպես նաև Մ.Մ. N 18-ի, երկու ամսիա ժողովրդական ավետիսների երկրորդ մասերը՝ գրառված են Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում (Զավախը, Արարատյան դաշտ, Ծիրակ, Լոռի, Զանգեզոր և այլն) և ունեն ոչ միայն մինմուզն գրեթե անփոփոխ բանաստեղծական տեքստը, այլև բուն երաժշտական մի շարք ընդհանրություններ: Նմուշների մեծ մասը գրառված են Եկեղեցու սպասավորներից կամ նրանց զավակներից:

Այս շարականի բովանդակությունը կապված է Քրիստոսի Ծննդյան խորհրդի հետ: Այն պատմում է Քրիստոսի՝ Բեթղեհեմի քաղաքի քարանձավում ծնվելու, խանձարուրի մեջ փաթաթվելու և Բովիվների ու Բոեշտակների օրիներգության մասին:

Բանաստեղծական տեքստը կառուցված է քառասոր տներից, որոնք հանգավորվում են առաջին տաճ (առաջին և չորրորդ տողերը) և երրորդ տաճ մեջ (երկրորդ և չորրորդ տողերը), մինչդեռ երկրորդ տաճ մեջ հանգավորվում բացակայում է: Տողերը հիմնականում յոթվանկանի են, բացի երկրորդ տաճ առաջին՝ հինգվանկանի, և երրորդ տաճ առաջին՝ ինը վանկանի տողերից: Բանաստեղծական տեքստը բարբառային տարրերակման չի ենթարկվում, սակայն երեսն աղավաղվում է:

Ժողովրդական «Խորհրդու մեծ»-երը առաջին հայացքից նման չեն Ն. Թաշճյանի գրառած և «Ծարակնոցում» տեղ գտած նմուշին: Սակայն նմանություն կա, և այդ նմանությունը սկզբունքային է, որովհետև այն վերաբերում է վանկաչափությանը: Ստորև բերում ենք «Ծարակնոցի» տարրերակի վանկաչափությունը.

1 1 2 1 1 1 2 1 2 1 1 1 1 1(2)

Խոր - Բուրդ մեծ և սքան - չե - լի, որ յայս ա - տղ յայտ - նե - ցաւ,

1 1 1 1 1 2 2 1 2 1 1 1 1 2

Հո - վիւք եր - գեն ընդ իրենց - տակս, տաճ ա - եւ - տիս աշ - խար - հի

Հետաքրքիր է, որ մեր դիտարկած բոլոր ժողովրդական նմուշներն այս կամ այն չափով պահպանում են այս վանկաչափական մոդելը: Երևութեն անշեղորեն վկայում է այն մասին, որ բոլոր մեղեդները կցված են տվյալ բանաստեղծական տեքստին և չեն փոխանցվել այլ երգերից:

Կշոռվթի դիտարկումից սկսած ակնհայտ են դառնում տարրերությունները: Մեզ ծանոթ ոչ մի ժողովրդական նմուշ չի վերաբերում Խորենացու շարականին բնորոշ բազմազան կշոռվթային պատկերը: Մեծ մասամբ կշոռվթը բավականին ազատ է և ենթարկվում է միայն վանկաչափական ստանդարտին: Մի շարք նմուշներում (թվով 6) առկա է հիմնականում հավասար քառորդներով կամ ութերրոդականներով ծավալվող շարժում: Միաժամանակ նկատվում է կշոռվթային բանաձևերի առաջացման և խմբավորման միտում: «Խորհրդու մեծ»-երը կատարվում են աշխուզ տեմպով: Զուգադրվելով որևէ ավե-

տիսի հետ (որոնք առավել հաճախ «աստեղային»¹⁰ ավետիսներ են), դրանք ծառայում են իբրև յուրօրինակ «յորդորակներ»:

«Խորհուրդ մեծ»-երի ներքին ընդհանրությունն է՝ ավելի նկատելի է դառնում ձայնակարգի և ինտոնացիայի դիտարկման ժամանակ:

Ընդհանուր առմամբ, «Խորհուրդ մեծ»-երի համար առավել բնորոշ ձայնակարգը տերցիալի հիմքով հիպոդրիականն է կամ հիպուղականը (8 նմուշ): Հիմնաձայնից ցած ձայնաշարն ընդգրկում է 1 (7 նմուշ) կամ 2 (3 նմուշ) հմչյուններ: Այսպիսի ձայնակարգային կառույցներ բնորոշ են Դ կողմ նկելեցական ձայնեղանակին: Ուշագրավ է, որ գութեւ բոլոր ժողովրդական նմուշները պարունակում են ԴԿ ձայնեղանակին բնորոշ ինտոնացիոն դարձվածքներ: Այս փաստից ելնելով, գտնում ենք, որ Կոմիտասն ավետիսի վերոբիշյալ իր սահմանման մեջ ի նկատի ունի ժողովրդական «Խորհուրդ մեծ»-երը և ոչ՝ բուն ժողովրդական ավետիսները, որոնց համար ԴԿ ձայնեղանակը որպես ձայնակարգային բնութագրում (տերցիալի հիմքով հիպոդրիական), առավել ևս իբրև մեղեդիական մոդել, բնորոշ չէ¹¹:

Կամ նաև «շեղումներ» նշված կանոնից: Եթե նմուշներից մեկի (Երևանի պետական կոմսերվաստորիալի ֆոնդ, Բնուագայում ԵՊԿ, Աշտարակ-1974, N 20) ձայնաշարն ընդգրկում է ընդամենը չորս հնչյուն, ապա մեկ այլ նմուշի (Արվեստի ինստիտուտի ֆոնդ, Բետագայում Ա.Ի., N 14210) ձայնակարգը, փոփոխվող երկրորդ աստիճանի շնորհիվ, ասես, տասանգում է Էլուականի (ավելի ճգնահատ՝ մինոր հնգալարի) և փոյուգիականի միջև: Այլ ձայնակարգային կառույցներից հազվադեպ պատահում է հիպոհոնականը (ձգտող ստորին 7-րդ աստիճանով մաժոր քառալար. Մ.Մ. N 18, ԵՊԿ, Սևան – 1982, N 88): Այսպիսով, մաժորային ձայնակարգային երանգը «Խորհուրդ մեծ»-երին բնորոշ չէ:

Հաշվի առնելով ձայնակարգային որոշ տարրերությունը, պետք է այդուհանդերձ նշել, որ մի շարք «Խորհուրդ մեծ»-եր կշռովահնությունացիոն առումով չափազանց մոտ են իրար և կարող են համարվել միևնույն երգի տարրերակներ:

Առաջին իսկ հայացքից ակնհայտ է, որ ժողովրդական «Խորհուրդ մեծ»-երի ճնշող մեծամասնության մեջ գերակայում է աստիճանական մտածողությունը: Անհրաժեշտ է արձանագրել, որ «Խորհուրդ մեծ»-երում նշանակալից դեր է կատարում նաև կվարտային թոփչը դեպի հենակետը, որն առկա է նաև Խորենացու շարականում և հանդիսանում է ԴԿ ձայնեղանակի բնորոշ տարրերից մեկը: ԵՊԿ, Թումանյան – 1984, N 35 նմուշում այն դարձել է տերցիալի քայլ: Երկու նմուշներում գտնում ենք Շննդյան երգերի համար ոչ բնորոշ թոփչըներ՝ կվիմտայով և մեծ սեքսուայով: Մեղեդու ուղղությունը մեծ մասմբ վարընթաց է կամ «հարթ»:

¹⁰ Մեր բնութագրման համաձայն, «աստեղային» են կոչվում այն ժողովրդական ավետիսները, որոնց հիմնական բովանդակությունը կապված է Քրիստոսի Ծննդմիտ ավետող երկնքում հայտնված աստղի և աստվածային մամուկին տեսակցության եկող երեք մոգերի մոտիկների հետ:

¹¹ «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականի նմուշների և ժողովրդական ավետիսների մեջ առկա Հայ Առաքելական Եկեղեցու երաժշտության ձայնեղանակների տարրերի քննության համար շնորհակալ ենք արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ Անահիտ Բաղդասարյանին, որն օգնել է մեզ նաև այլ արժեքավոր մասագիտական խորհուրդներով:

«Խորհուրդ մեծ»-երին, ինչպես և ժողովրդական ավետիսմերին բնորոշ են որոշակի երգի երգ փոխանցվող կշռութահնոտնացիոն դարձվածքները: Սակայն այս անգամ երաժշտական բանաձևերը կապված են ոչ այնքան ժողովրդական, որքան եկեղեցական երաժշտության հետ: Այսպես, նմուշներից մենքը (ԵՊԿ, Աշտարակ - 1974, N 20) սկսվում է «Քրիստո ծնաւ և յայտնեցաւ» «Փանֆարային» բանաձևով¹²: Նույն բանաձևով է ավարտվում Մ.Մ. N 3 նմուշը:

Առիասարակ Մ.Մ. N 2-ը (Վերջանում է ԳԶ-ի ավարտի բանաձևով)¹³, ԵՊԿ, Աշտարակ - 1974, N 20-ը, Ախալցխա - 70, N 104-ը (այսուղեւ կա նաև ԴԿ տիպական ավարտի դարձվածքը), Առթիկ - 1976, N 311-ը, Թումանյան - 1984, N 35-ը (այսուղեւ ԴԿ սկսվածքը բանաձևն ամբողջ երգի ֆրակտոլոգին օրական¹⁴ է), Ահ, NN 12500, 280-1-ը և 14210-ը (այս վերջինում տիպական ավարտի բանաձևը ստանում է փոյուգիական ձայնակարգային երանգ): Կառուցված են ԴԿ բանաձևային ինտոնացիաներով: ԵՊԿ, Էջմիածին - 1985, N 87-ը ավելի շատ հիշեցնում է ԴԶ կամ ԱԶ դարձվածքի ինտոնացիաները, իսկ ԵՊԿ, Սևան - 1984, N 88-ում առկա են ԴԿ-ի տիպական ինտոնացիաները, սակայն՝ մաժորային երանգով:

Այս փաստերը հուշում են, որ «Խորհուրդ մեծ»-երը, ժողովրդական կենցաղավարում ստանալով, միշտ էլ շարունակել են նմուշավել իրու եկեղեցական երգեր և կատարվել են առանց համապատասխան նորմերը խախտելու:

Որոշ բուն ժողովրդական ավանդական բանաձևեր, փոփոխված տեսքով, նշմարելի են նաև «Խորհուրդ մեծ»-երում: Դրանց թվում են ավետիսմերում հաճախ համեյիպող մեր կողմից պայմանականորեն «Թայսօր ծնունդ» (Երաժշտական օրինակ 1.) և «Այսօր սոն է» (Երաժշտական օրինակ 2.) անվանված կշռութահնոտնացիոն բանաձևերը: Ի դեպ, վերջինն առկա է նաև Խորենացու շարականի յուրաքանչյուր տաճ երրորդ տողի ակզբում:

Մի շարք ցցուն կշռութահնոտնացիոն դարձվածքներ որոշիչ են դառնում ձևագոյացման համար, իսկ նմուշներից 6-ում հանդես են գալիս որպես հիմնական բանաձև-ֆրակտալներ: Որպես օրենք, ֆրակտոլի օրականերն ունեն վարընթաց ուղղվածություն:

Ձև. Ինչպես արդեն նշեցինք, «Խորհուրդ մեծ»-երի մի մասին չափազանց բնորոշ է ֆրակտոլային կառուցվողը: Այս առումով առավել հետաքրքիրը Մ.Մ. N 3 նմուշը է, որում

¹² Այդ բանաստեղծական-երաժշտական բանաձևը կարելի է գտնել. Զայնագրեանը երգեցողութիւնը Սրբոյ Պատարագի, Երկրորդ տպագրութիւն, Վաղարշապատ, 1878, էջ 112, Կոմիտաս, Երկերի ժողովածու, Բառ. 10, էջ 172, ԵՊԿ, Սևան - 1982, N 10: Պատարագի մեջ բանաձևը կատարում են «մամկումք բարձր ձայնի» (Զայնագրեանը երգեցողութիւնը..., էջ 112), այսինքն՝ Եկեղեցին, հավանաբար, պահպանել է երեխաների՝ ժողովրդական ավետիսի անելու ծնեաց շրջանակներում կատարման եղանակը: Պետք է նշեն, որ Պատարագում բերված մեղեդին փոքր-ինչ տարրերովն է բանավոր ճանապարհներով մեզ հասած մեղեդիներից, որոնք, իրենց ներքին, ավելի մոտ են ներկայում Ս. Էջմիածնում երգվող բանաձևին:

¹³ Այս նմուշը հաստատում է Կոմիտասի ճշումը ԴԿ-ի և ԳԶ-ի խառնուրդ համեյացող մեղեդիների մասին:

¹⁴ Ֆրակտոլը կամ ֆրակտոլային օրական կշռութահնոտնացիոն փոքրագոյն (մոտիվ-մորֆեմից միջևն մի քանի հնչյուններից բալկացած դարձվածք) կառուցվածքը մասմիկն է այն եղերում, որում կառուցվում են այդ մասմիկի կրկնութամբ և տարրերակումով: Այս մասին մարդաբանորեն. Լ. Սիմոնեան, Ֆրակտոլային մոտածողութիւնը հայկական իմարտվիզացիոն երաժշտական ֆոլկուրում, Հայկագետական Հանդէս, Բառ. 1, Թեյրութ, 2000, էջ 307-328:

երկու ֆրակտալային օդակները (d1 e1 f1 g1 և d1e1d1c1) ոչ միայն կրկնվում են, այլև հանդես են գալիս շրջված, մեծացված, փոքրացված և խեցգետնաքայլ ձևերով: Անանի նմուշը նույնպես ներկայացված է իրար հետևողականորեն հաջորդող երկու երաժշտական դարձվածների կրկնությամբ և տարրերակումով: Այսպիսի կառույցը, թերևս, նույնպես կարելի է դիտել իրեն երկու օդակներ ունեցող ֆրակտալային ձև:

Սակայն բոլոր նմուշներում չեն, որ առկա է նման ձևական հակասությունը տներից բաղկացած բանաստեղծական տեքստի և ֆրակտալային երաժշտության միջև: Եթեք նմուշներ ունեն ա b c b1 կառույցը, որը կրկնվում է տնից տուն:

Նույնիսկ եթե կառույցը ֆրակտալային չեն, ժողովրդական «Խորհուրդ մեծ»-երի երաժշտության մեջ գրեթե միշտ հանդիպում ենք որոշակի մորֆենմեր (հաճախ՝ ԴԿ ձայնեղանակի ինտոնացիոն տարրեր), որոնք կայուն են և հանդիսանում են երգի ձևական խարիսխը: Այսպես, Վերոնիչյալ ԵՊԿ, Աշտարակ – 1974, N 20-ի ձևական կառույցն ունի հետևյալ տեսքը.

A B C A1 A2

ab cb1 cb2d a1b3 a2b4,

որտեղ A2 ֆրազը եղանակավորում է բանաստեղծական տեքստի երկրորդ տաճ առաջին տողը: Ինչպես տեսմում ենք, ե կառույց-դարձվածքը հանդես է գալիս երգի բոլոր ֆրազներում: Այս նույն առանձնահատկությունն ունեն ևս երկու այլ «Խորհուրդ մեծ»-եր:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ «ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ»-ԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՇԱՐԱԿԱՆԸ

Ժողովրդական «Խորհուրդ մեծ»-երը կարելի է բնութագրել որպես քրիստոնեական ժողովրդական երգեր կամ որպես պարականոն եկեղեցական երգեր: Իրեն ժողովրդական երգեր դրամք պատկանում են ՄԱՆԵՐԱՆ ծիսական երգերի ժամբին: Դրանց բնորոշ է անհատական կատարում, առավելապես հիպոդրիական կամ հիպոէլուական ձայնակարգեր՝ եկեղեցական երաժշտության ձայնեղանակային մտածողության գգալի ազդեցույամբ, աղքատ կշռության պատկեր, պարայմության բացակայություն, «յորդորակ»-ային կամ հիմնելի բնույթ, որոշակի ֆրակտալային ձևամտածողություն, վանկային-ծորերգային երգառն: Բոլոր նմուշները կառույցներ են միևնույն վանկաչափական մոդելով:

Ակնառու է, որ ժողովրդական նմուշները տիպարանորեն բավկալանին արխահիկ են, ուստի և հարց է ծագում. եթե բոլոր ժողովրդական նմուշների համար մայր օրինակ կամ սկզբնաբյուր է ծառայել Խորենացու շարականը, ապա ինչո՞ւ է պատմական «զարգացումը» մեզ հայտնի բոլոր դեպքերում ընթացել պարզեցման ուղղությամբ: Այն բացատրությունը, թե, իբր, ժողովրդական երգիչների կամ գյուղական քահանաների համար Խորենացու զարդուրուն մեղեղին վերարտադրելը կամ հիշելը դժվար է եղել, իմաստ չունի: Կան ժողովրդական ավետիսներ, որոնց մեղեղիները պակաս բարդ և զարդուրուն չեն, քան «Շարակնոցի» «Խորհուրդ մեծ»-ը, և այդ բանը բոլորովին էլ չի խանգարել ժողովրդին մտապահել և կատարել դրամք: Ավելին, ժողովրդական երգասացները «Խորհուրդ մեծ»-

երի հետ միևնույն «երգաշարի» մեջ բամադրում են հենց զարդոլորում ոճի «աստեղային» ավետիսմերը: Ուրեմն հարցի պատասխանը պեսք է փնտրել այլ տեղում:

Այս հարցի շուրջ կարող է լինել երեք վարկած.

ա. «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականի բանաստեղծական տեքստով իրարից անկախ ստեղծվել են տարբեր մեղեդիներ,

բ. տվյալ բանաստեղծական տեքստով բոլոր նմուշները (ժողովրդական և եկեղեցական) մեկ՝ դեռևս ամենայտ բնօրինակի տարբերակներ են,

գ. Բայց նմուշներից մեկը համդիսանում է բնօրինակ, իսկ մյուսները տարբերակներ են՝ զարգացման և կորուստների տարբեր աստիճանով:

Գաղտնիք չէ, որ «Շարականցի» մեջ մտած մեղեդին նույնական գրառված է բանակոր աղբյուրից՝ այնպես, ինչպես այն կատարվել է 19-րդ դարում: Արդյոք կարելի՞ է պնդել, որ 5-րդ դարում ստեղծված շարականը ամենդ ձևով և անփոփոխ հասել է մինչև 19-րդ դար: Ինչևէ, նույնիսկ Կոմիտասը չի շեշտում, որ «Խորհուրդ մեծ»-ը պատկանում է Խորենացու հեղինակությանը, այլ ճշում է: «Վերագրվում է»: Հետևաբար, հազիվ թե մենք բավարար հիմքեր ունենք պետքու, որ «Շարականցի» մեղեդին հնագույն սկզբնադրյուրն է, իսկ մնացած բոլոր նմուշները հետադիմած աղավաղումներ են: Ամեն դեպքում, այս հարցը պարզաբանման կարիք ունի:

Այժմ անդրադառնաք մի այլ չափազանց կարևոր հարցի: Բանն այն է, որ Խորենացու «Խորհուրդ մեծ»-ը համարվում է հոգևոր (իմա՞ եկեղեցական) ավետիս: Հետևելով պարզագույն տրամաբանությանը, եթե ժողովրդական «Խորհուրդ մեծ»-երը Խորենացու շարականի տարբերակներ են, ուստի դրանք ել պեսք է ավետիսներ համարել: Սակայն այդ դեպքում առաջանում է անհայթահարելի մի հակասություն: «Խորհուրդ մեծ և սքանչելի» բանաստեղծական տեքստով ժողովրդական երգերը որևէ առնչություն չունեն բուն ժողովրդական ավետիսների հետ, բացի Քրիստոսի Ծննդյան թեմատիկայից¹⁵:

Ժողովրդական ավետիսի կառուցքը շատ կոտը է, տաղաչափական և կառուցվածքային պահանջները՝ գործել ամսախտ, և դա ամսախտ այս կամ այն բանաստեղծական տեքստի բովանդակությունից: Ո՛չ Խորենացու «Խորհուրդ մեծ»-ը, ո՛չ էլ ժողովրդական «Խորհուրդ մեծ»-երն այդ պահանջներին չեն համապատասխանում: Խորենացու շարականի և դրան մոտարկող նմուշների բանաստեղծական տեքստերն ունեն տներից կազմված երաժշտական տեքստեր, հաճախ ֆրակտուալային կառուցվածքը: Ի տարբերություն դրանց, պետիսների բանաստեղծական տեքստերը բաժանվում են խոշոր թեմատիկ բլոկների, իսկ մեղեդները կառուցքում են տող - կամ երկատող - միավորների կրկնությամբ:

«Խորհուրդ մեծ»-երի գործել անփոփոխ մեղեդակային բանաստեղծական տեքստի տաղաչափական կառուցքի հիմքում յոթվանկանի տողն է, հանգավորում կամ չկա, կամ հանգավորվում են առաջին և չորրորդ, երկրորդ և չորրորդ տողերը, մինչդեռ ավետիսի տողը յոթվանկանի է, իսկ հանգավորումը պարտադիր է, ընդ որում հանգավորվում են հարևան տողերը՝ երկուական կամ երեքական: Վերջապես, Խորենացու բանաստեղծության մեջ «ավետիս» բառը կոկակ չէ, իր ուղղակի ձևով այն համեսն է գալիս միայն առա-

¹⁵ Ի դեպքում, կոմիտասյան վերը մեջբերված սահմանումի մեջ գտնում ենք ավետիսի թեմատիկ պայութիք բնօրինակությանը պահպանապահ պատճենը, որը խապար բացակայում է ժողովրդական ավետիսներում:

չին տաճ մեջ՝ վերջին սողոյ մեջտեղում, «աւետեօք» ձևով՝ չորրորդ տաճ երրորդ սողոյ վերջում¹⁶: Այն չի կրկնվում տողերի վերջերում, ինչպես ավետիսմերում է: Նույնիսկ եթե վերանանք ձևական կողմից և դիտարկենք բանաստեղծական տեքստերի ընդհանրությունները, դրանք, ըստ Էռլիյան, չըշին են:

Վերջապես, ինչպես արդեն նշել ենք, «աստեղալին» ժողովրդական ավետիսի կերպով և կառուցով մեկ ավետիս կա նաև Հայ Առաքելական Եկեղեցու Ծննդյան Պատարագում: Այդ ավետիսը, բայց ոչ ամենահիմնային «Խորիուրդ մեծ և սքանչելի» շարականը, կարող է խւկապես դրվել ժողովրդական ավետիսմերի կողքին և դիտարկվել իրեն միևնույն ժամրի նոր մարմնավորում եկեղեցական միջավայրում:

Այսպիսով, «Խորիուրդ մեծ և սքանչելի» բանաստեղծական տեքստով ժողովրդական երգերը ավետիսմեր չեն, այլ Ս. Ծննդյան քրիստոնեական ժողովրդական երգեր:

Իրեն ժողովրդի հոգևոր ժառանգության մաս, ժողովրդական «Խորիուրդ մեծ»-երը Անդրկայացնում են ոչ միայն զուտ գիտական, այլև գեղարվեստական մեծ արժեք: Դրանց գրառումն ու տարածումը կարևոր է եթե կարող է խաղալ արդի ժամանակներում ժողովրդի քրիստոնեական-ազգային ավանդների հետ կապը վերականգնելու և ազգային ոգով դաստիարակության համար:

Երաժշտական օրինակ 1.

Այսօր տաճ է

Անդր բագ - վա - րին
Այ - սօր տաճ է
Խոր - հուրդ մեծ և լս - քամ չն - լի

- Հարաբանեկան երգ, Կոմիտաս, Երկերի ժողովածու, հառ.10, Ե. «Գիտություն», 2000, էջ 61, N37
- Ավելոյն, ԵՊԿ, Ապարան - 2000
- Խորիուրդ մեծ, ԱԲ, N 12500, 280-01

Երաժշտական օրինակ 2.


Հայօր Ծնունդ

Հա - սօր Ծն - նունդ
Անդ երա - մա - նալ աստ - վա - ծա - յիմ
Խոր - հուրդ մե - ծըս և լս - քամ - չն - լի


- Երգ Ծննդյան, Հայրենի երգեր (կազմ. Ա. Փափլամյան), Ե., «Սովետական գյոր», 1971, էջ 61
- Արդ երանանվ աստվածային (հարաբանեկան երգ), Կոմիտաս, Երկերի ժողովածու, հառ.10, Ե., «Գիտություն», 2000, էջ 74, N 67
- Խորիուրդ մեծ և սքանչելի, ԵՊԿ, Արքիլ - 1976, N311

¹⁶ Այս վերջին դասքրում կարելի է նմանադրել հնագույն ավետիսմերի ազդեցությունը:


Խորիուրդ մեծ




Խոր - հորդ մեծ և ըս - քամ - չն - լի, որ հայ - սըմ ա - վուր հայտնե - ցալ



Խո - վիլը եր - զեն ընդ երեշ - տու - կու, տամ ա - վե - տիք աշ - խարդ - եին: (ը օդ - նոր նոր որ - բա




ի Թեր - դե - հեմ բա - դա - բամ, որ - պիք մարդ - կամց օրի - նե - ցեր, զի վա - սըմ մեր մարմ - նա - ցալ:



Խոր - հորդ մեծ և ըս - քամ - չն - լի, որ հայ - սըմ ա - վուր հայտնե - ցալ, Խո - վիլը եր - զեմընդ երեշտու - կու



տամ ա - վե - տիք աշ - խար - եին, ծը - նոր նոր ար - բա



որ - դիք մարդ - կամց օրի - նե - ցեր, զի վա - սըմ մեր մարմ - նա - ցալ:

Երեամի պիտուկան կաներկաստարիայի ֆենդ, Թումանյան, գ. Օձուն, 1984, № 35
Դրամատիկ առ Անդրտիքասյամի

Խորիուրդ մեծ

Խոր - հորդ մեծ և լս - քամ - չն - ին, որ եայս ա - վոր եայտ - մե - ցալ,
 չն - վիլը եր - գեմ լին կրեշ - տակս, տամ ա - վե - տիս աշ - իորդ - ին:
 Ծը - մալ ար - քա ի թեր - դե - հեմ քա - զա - քամ, որ - դիք մարդ - կամց օրե - մե - ցեր
 զի զա - սրբ մեր մարմ - մա - ցալ: Ամ - տա - մա - մե - լի է եա - վոր եայտ - մու - բամ

Եղանակի պիտույքան կենսերվառորիայի ֆոնը, Անդ, 1982, N 88